



ՀԱՅԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԶԱՐԻՍ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽԻԻ 54

ՅՈՒԼԻՍ 21/3 Օգոստոս 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

ԵՍ ԵՄ  
ՔԵՄԱՆ  
ՏՈՒՐՈՒ  
ԿԵՆԻՑ





# ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի : Յուլիս 21/3 Օգոստոս : Թիւ 54

ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ

ՊԻՈՍԻ Ժ.Ի

ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿՆ ԱՌ ԱՄԵՆԱՊ. ՀՈԳԵԻՈՐ ՏԵՐ

(Շար. եւ Վերջ)

18. Սրբազան Քահանայապետին նամակին վրայ այս համառօտ տեսութիւնը չաւարտած, կ'ուզենք երկու խօսք ըսել նաեւ անոր յառաջ բերած ազդեցութեան վրայ: Ճշմարիտ հաւատացեալները, առանց խլտութեան, սարսեցան այս ծանր պատիժէն և մեծապէս ազդուեցան, բնականաբար: Բայց անոնք, որոնք կ'ուզէին զեռ յամառութեամբ իրենց կամքը յառաջ քշել, այլեւայլ մեկնաբանութիւններով նկրտեցան այս նշանաւոր թուղթին արժէքը նուազեցնել: Այո տեսակ ինքնաճնար մեկնութեանց մէջ, — որոնց շատը անմտութեան արդիւնք էին, — առաջին տեղին ունեցաւ թարգմանութեան ճշգրտութեանը վրայ տարակոյտը,

կասարեայի և ապառնիի գունակներուն (nuances) վրայ, անպատուութեան ահաւոր ձրի ենթադրութիւն մը, — զի լեզուական տգիտութիւնը չենք կարծեր որ հաճէին ենթադրել. և այս անտեղի և անորակելի ենթադրութեամբ գործեցին, դիմեցին, բնագիրը ձեռք ձգեցին՝ կասկածն ինն լրագիրներու մէջ իսկ հրատարակելով, Լաւագոյն պիտի լլլար ուրիշներու նամակները, հեռագիրները գրաւօղները, քացաղները, կարգացողները — իրենց սիրելի գործակիցները — կասկածիլ և պատժել. հո՛ն է անպատուութիւնը՝ բացարձակ: — Հետեւեցաւ ապա անիմաստ ազմուկը լրագրութեան հրապարակին վրայ. կային անկրօններ, որոնք փողոցային լուսանքներ, սրիկայի հայհոյութիւններ կ'արձակէին, իրրե գինով կամ յիմար. առոնք ի՞նչ տիպաւով կը միջամտէն արդեօք մեր գործոց մէջ իրենք արդէն իրրե անկրօն, անէծքի տակ են, բայց դարձեալ կը հայհոյեն, գորահրու համար Ովիդիոսի խօսքը ճշմարտելով իրենց վրայ.

... Nunc quoque turpes

Litibus exercent linguas; pulsoque pudore,

Quamvis sint sub aqua, sub aqua maledicere tentant.

(Met. VI. 374)

Առոնք անարժան են հայ լնուելու. զի կրօնքը կը քանդեն, աղբը կը փճացնեն: Առոնք՝ ոխերիմ թշնամի Կաթողիկէութեան, կ'ուզեն զայն անհետացնել. և հիմա դեր կ'ըլլեն ապստամբութեան. կը պաշտպանեն. յետին նկատուածով, զոր կ'ըմեն ալ, ըսին ալ թէ Այս Կաթողիկէները ուրիշ եկեղեցւոյ մը ծոցը պիտի դիմեն... աւաղ, ի՞նչ բարեկամներ, որ տուն կը քանդեն: Առոնց դէմ է որ հայ եկեղեցւոյ, տկար և անզօր, կը հնչեցնէ ահազանգը... բայց որովհետեւ բաժանեալ է մրուրներէ, պիտի կորսուի անշուշտ՝ անոր կամ անոր ձեռքով, որ մը առաջ կամ օր մը վերջը:

Իսկ մեր ըմբոստ կոչուած եղբարքն, զորս կը պատժէ Գերագոյն Դատաւորը, չեղեցան այսպիսեաց ետեւէն. կիրք և վրէժանդրութիւն կուրցուցին զիրենք. թերահաւատութիւն կամ ակնկալութիւն կամ յետին մտածումներ մղեցին զիրենք ականջ կախելու այդ կարգի մարդոց սղոքանաց, խախտյաներուն, գովասանքներուն, զիջան անոնց հաւատալու և անոնց յարելու: Եւ ապա գործեցին ամէն ապօրինութիւն յենկով անպարտաճանաչ և հրէական ու ֆարմաօսական ազդեցութեան մը տակ գործող նախարարութեան մը բռնութեան վրայ, որ նոյն իսկ Պետութեան հիմերը քայքայելու վրայ էր. այն կառավարութիւնը որ Հրէից ժողովոյն և Սախամապետին միջև տեղի ունեցող ճիշդ յարեւմտան ինդրոյն լուծումը տուաւ՝ իրաւունքը Սախամապետին տալով, այդ կառավարութիւնը մեղի բռնողին հակառակն ըրաւ, օտանակոխելով ամէն

արդարութիւն և օրէնք, առ ոչինչ գրելով կաթողիկէ կրօնքին հոգին և կանոնները, յընչաց քերելով անհամեմատ մեծամասնութիւնը Հասարակութեանս: Ուստի մեր ըմբոստները այնպիսի կառավարութեան մը անօրէն գործակցութեամբ ամէն անքաւելի ապօրինութիւնները ի գործ դրին՝ ընդդէմ եկեղեցւոյ և ընդդէմ իրաւանց Հասարակութեանս: Անոնք որ եկեղեցականներէն զմասնս կը դատապարտէին իբր անդրաշինական և անիրաւարար կ'ազդակէին թէ՛ «Մեր իրաւունք Հոռմի կը ծախուլին» — առանց գիտնալու թէ ի՞նչ են և ուսկի՞ց կու գան անոնք. թէ ո՞վ է ծախողն ու գնող. թէ Հոռմ ի՞նչ պէտք ունի մեղի պէս խեղճերու իրաւունքը կապտելու, ասոնք կ'ըսեմ, այս ինքնասաց ազգասերները (!!) այս անգամ իրենց կրքին գոհեցին ո՛չ միայն Հասարակութեան, այլ ամբողջ քրիստոնեայ Հասարակութիւններու ճշմարիտ իրաւունքները. և աններելի յանդգնութեամբ և կատարեալ անազգասիրութեամբ — քառասայն վայրկեանէն և անխիղճ նախարարութեան մը յաւակնութենէն օգտուելով, աւելի անխղճօրէն մատնեցին այդ կառավարութեան՝ Հասարակութեանս ամենահին, ամենասրբազան, ամենաանհպելի իրաւան ու ճշմարիտ ԻՐԱՅԻՄԻԱՆՔԵՐԸ և ստեղծեցին անաւոր նախընթաց մը զոր պիտի տուժենք այսուհետեւ ոչ միայն մինք, այլ և պիտի տուժեն միւս հասարակութիւնք: Քանզի մեր քաթրիք անխախտելի էր, ըստ ֆէրմանին. կառավարութիւնը ՉԷՐ ԿՐՆԱՐ զայն հրաժարեցնել, ասիկայ միայն կաթողիկէից ճշմարիտ ԻՐԱՅԻՄԻԱՆՔԵՐԸ էր. արդ այս իրաւունքը ծախեցին այդ կառավարութեան ապօրինի՝ և ողբալի նախընթաց՝ մը հիմը դնելով: Այս տեսակ դործ մը արդէն չէր կրնար ընաւ կատարուիլ մանաւանդ միայն աշխարհականներուն ու այն ալ քանի մը մարդոց միայն, — դիմումով. պէտք էր Սինոդ. չպէտք էր եկեղեցականութիւն, պէտք էր ամբողջ Հասարակութիւն, այս ալ մեծ և իրական իրաւունք մըն էր. զայն ալ ծախեցին այդ կառավարութեան: — Այս տեսակ պաշտօնականութիւն մը չէր կրնար ընաւ կատարուիլ առանց Հոռմայ Աթոռոյն գիտութեան, որ միայն իրաւունք ունի կարգելու Հոգեւոր Պետ, որուն անձին վրայ կը միանայ քաթրիքութեան իշխանութիւնն ալ. ահա այս սրբազան իրաւունքն ալ ծախեցին այդ կառավարութեան: — Մեր Հասարակութիւնը, ինչպէս ու է Հասարակութիւն, չէր կրնար կառավարուիլ և ներկայացուիլ միայն և լոկ աշխարհականներէն. այլ անհրաժեշտ պէտք է եկեղեցական Պետ և Սինոդ և եկեղեցականութիւն. աւսիկա ամենամեծ բարոյական ոյժ մըն է Քրիստոնէից՝ իրենց գոյութեան պահպանումին և Պետական մարդոց ու է անիրաւ ոտնձգութիւններուն դէմ մեր առանձնաշնորհումներուն. ասիկայ ֆէրմաններով և օրէնքներով և անխախտ սովորութեամբ և քանի մը Դաշնագիրներով հաստատուած և վաւերացուած ամենաթանկագին մէկ իրաւունքն է Հասարակութեանց. զայն ալ ծախեցին այդ կառավարութեան: — Մեր Եպիսկոպոսները՝ ո՛չ

իրք Մուրախա, այլ սոսկ իրքև հոգեւոր պետեր, անձեռնմխելի և ան-  
բռնաբարելի էին Կառավարութենէն. նա իր պարտքը ճանչնալ զանոնք  
իրքէն հոգեւոր ունէ. և կրօնից ազատութեան պատճառաւ՝ անոնց հոգե-  
ւոր պաշտօնին չէր կրնար բնաւ երբեք միջամտել կամ արգելք բլլալ  
մանաւանդ իր պարտքը զանոնք պաշտպանել. տախտակ կրօնքի համար  
յոյժ կարեւոր և մեր սրբազան մէկ իրաւունքն էր. այս մարդիկը ան-  
խղճօրէն այս իրաւոն նքն ալ ծախեցին այդ Կառավարութեան՝ անոր և  
ամբոխին ստրուկներ ընելով Եպիսկոպոսները, Դեռ ո՞ր մէկն ըսեմ՝...  
ո՛հ, մեր ամէնէն մեծ ու սրբազնագոյն իրաւունքները ծախեցին՝ փճա-  
ցուցին, և դեռ ազգասէր կ'անուանուին... մանաւանդ թէ ազգասէաց  
և ազգակործան իսկ են: Անքաւելի է իրենց այս անաւոր ոճիրը, որ չէր  
կրնար բնաւ գործուիլ Ո՛ր Ե՛կ պատճառի համար:

Այս վիճակին շատ նման դէպք մը կայ ազգային պատմութեան  
մէջ. թէ՛ և շատ աւազելի: Ո՛րչափ լալու բան է. ինչպէս կ'ողբայ ան-  
մահն Եղիշէ (Յեղանակ Դ), երբ «Ընդ փակել միաքանութեանն, եւ երկնա-  
ւոր առաքիլութիւնն հետանայ... Քանզի հասեալ անկեալ անդամին, որ  
յառաջացոյն տրուեւ տուր մարմնոյս էին, դառնայ մարդ յաճախու առաջի  
մեծաւայդ դիպակն... եւ եթէ ի վերայ միոյ անձին այսպէս, ո՛րչափ եւս  
առաւել ի վերայ ողջոյն ազգի միոյ»։— Նոյն իսկ թշնամիներն, և կամա-  
կատարներն անգամ, ի ներքուստ դորովանք մը կ'ունենան այսքան  
անխղճութեան համար. որովհետեւ անոնք թէպէտ կը խորհին իրենց շահը  
և կը կատարեն այս ապօրէն դիմումները և խնդիրքները, սակայն կ'ապ-  
չին և կը դատապարտեն մտքով՝ այս ապիրատութիւնը, ինչպէս հապա-  
րապետն Միհրնեսէն, որ՝ երբ տեսաւ Վասակին ամէն բանի յանձնա-  
ռութիւնը, «Որ արար եւ կասարեաց զանեկայն չարիսն ընդդէմ ճշմարտե-  
րեանն, եւ զոր ինչ ոչ գիտիին անօրէն հեքանութիւն՝ իմացոցանեւ լոցա»,  
Միհրնեսէն, կ'ըսեմ, «Յոյժ միսիքարեցաւ ի միսս իւր զստեալս, եւ  
ած զմեզ՝ թէ ե՛ւ զանեկանեան այսպէս իսրիցեմք որսալ»։ Բայց, աւա՜ղ.  
որ կու գայ որ Աստուծոյ պատիժն ալ կու գայ, նոյն կամակատարնե-  
րուն իսկ ձեռօք. քանզի երբ այդ Միհրնեսէն արքայից արքային նկա-  
րագրից այս մատնութիւնը, Արեաց արքայն «Դառնացաւ յանձն իւր,  
եւ ասի անուռ երդմանք. Եթէ ապրեցի անօրէն ասն ի մեծ պատերազ-  
մէն, մեծաւ անարգանօք տալ ըմպել նմա զբաժակն դառնութեան մահու»։

19. Գալով անոնց որոնք կիրքերը ծայր աստիճան մղելով, ան-  
հանճար, անխիղճ, խելացնոր հրատարակութիւններ կ'ընեն, որոնք  
նոյն իսկ Կաթողիկեայ կաշիւով գիրենք, անվայել և ստորնաքարչ կերպով  
նախատինքներ կը գրեն, կը ժայթքեն թուք ու մուր և լիբր զրպար-  
տութիւններ և սաւեր, ո՛չ, այլ պիտիներուն պէտք չէ նոյն իսկ զիջա-  
նիլ պատասխանելու. ի՛նչ նմանութիւն կայ խաւարի և լուսոյ մէջ. ա-  
սոնց գրիչն ու ոճը կը մատնեն զիրենք և կը դատապարտեն. le style

c'est l'homme. ասոնք դեռ կը մաքառին Քահանայապետին դէմ. անոր Կաթողիկոս ընդունածը, ասոնք կը մերժեն. անոր Պատրիարք անուանուածը, ասոնք անուղղելի ագիտութեամբ կ'ուրանան: Հազար վեց հարիւր տարի առաջուան Պատրիարքները Թոքք Կառավարութեան Փէրմանովն է որ Պատրիարք կ'անուանէին. Չմմառու Կաթողիկոսները Փէրմանովն Պատրիարք էին. դեռ այսօր էջմիածնի Գէորգ Ե. Կաթողիկոսը Թոքք Փէրմանովն է որ Յայրապոյն Պատրիարք Հայոց կը ստորագրէ: — Բայց այսպիսիներն ազէտ անուղղաներ են, գձուձ և թինախնդիր և շահամուլ: Սակայն վա՛յ և ամօթ նախառանաց անոնց որոնք կ'ընկերակցին այսպիսիներու, որոնց թոյլ կու տան գրել այս ամէն անարգութիւնները՝ իրենց անուամբ, որոնց նաեւ պաշտօնապէս խոշոր ամսական վճարումներ կ'ընեն — այս անկողմնակալ և անստգլու և անաչառ և կարող մատակարարները, — ազգին արկղէն, ի վարձատրութիւն այս անկարգութեանց: Ո՛վ նորանշան ազգասէրներ, ո՛վ անխմանալի Կաթողիկեայք:

20. Եղան սակայն ուրիշներ ալ, որոնք լսին թէ՛ Հիմա ժամանակը չէր բանադրանք զրկելու: — Արդեօք ե՞րբ էր ժամանակը... երբ ամէն բան կործանէ՞ր... ո՛չ, ասոնք իրենց իմաստութիւնը կը գերադասեն Յիսուսի Փոխանորդին իմաստութեանը. մենք ասոնց հետ չենք կրնար խօսիլ: «Ծածկեցեր զայս յիսուս սնոց եւ ի զիսնոց, եւ յայնեցեր տղայոց»: «Ձանձիմս առ իմաստունս ունեիմ, յիմարեցան»: — «Ոչխարնէ՛ր, բաւ. Ս. Գրիգոր Նազիանզացի, մի արածե՛մք ձեր հոյիսները, եւ ո՛չ ձեր սահմաններէն՝ վեր ելե՛ք. որովհետեւ ձեզ բաւական է երե շաւ արածուիք: Մի՛ դատե՛ք ձեր դատարանները, եւ օրէնսդիրներու օրէնքներ մի տա՛ք» (Ճառ 19, Թիւ 10):

21. Ըսող ալ կայ թէ պէտք է իշխանութիւնը անձէն զանազանել, և անձը անարդողները, իշխանութիւնը անարգած չեն սեպուիր: — Ճիշդ Արդիականներուն (Modernistes) մոլորութիւնը՝ Ս. Քահանայապետէն յատկապէս դատապարտուած. և կ'ըսեն թէ արդիականութիւնը մեր մէջ մուտք չունի... Այս ոճով ամէն զեղծում կ'արդարանայ, զի իշխանութիւնն բառը վերացական (abstrait) ըլլալով, բնաւ պիտի չկարենայ ո՛չ նախատուիլ, ո՛չ բռնադատուիլ, ո՛չ յախչտակուիլ. յայտնի է ուրիշն որ լոկ սոփեստութիւն մ'է այդ՝ ամէն ապօրինութիւն գործել կարենալու համար: Այլ աե՛մն է որ կը թանձրացնէ յինքեան իշխանութիւնը, որով և կը մեկնուի LES AUTORITÉS բառին գործածութիւնը որ վերացեալ ըլլալով հանդերձ՝ անձերը կը նշանակէ: Եւ Բրիտոս Տէրն մեր չըսաւ՝ թէ ով որ ձեր իշխանութիւնը կ'անարգէ զիս անարգած կ'ըլլայ, այլ բաւ. ով որ ՁԵԶ կ'անարգէ, զիս կ'անարգէ: Անոր համար է նաեւ որ նոյն նամակին մէջ Ս. Քահանայապետը բանադրանքը պատճառող յանցանքները թուարկած պահուն կ'ըսէ. «Ժպրհեցան զիեզ, իրենց հո»

վիւր, անարգանօք և թշնամանօք ծածկել. սրբազան պաշտամանդ գործադրութենէն խափանել, քու պաշտօնական բնականէդ վտարել» : Ահա Ս. Քահանայապետը ինքնին կը մեկնէ թէ ի՞նչ կը նշանակէ «եկեղեցական իշխանութեան դէմ ապստամբ» ըսելը : Արդէն աշխարհային իշխանութիւններն ալ անձնաւորեալ կը համարուին անձեռով, ըլլայ թագաւոր, ըլլայ դատաւոր, ըլլայ ու է պաշտօնատար, զորոնք անարգողը, անարգած կ'ըլլայ անոնց իշխանութիւնը, և ըստ այնմ կը պատժուի :

22. Կան ոմանք ալ որ կ'ըսեն թէ այս բանադրանքը արժէք չունի, և ի հաւատիս իրենց ընդունայն կարծեաց կը պատճառարանեն թէ՛ Ա.) ուր յանցանք չկայ, չգործեր և պատիժ : Բ) եղած յանցանքին համապատասխան չէ այդ բանադրանքի պատիժը : — Տգէտներու համար թերեւս ներելի ըլլայ այս խմատակութիւնը. բայց ի՞նչ ըսելու է անոնց համար որ «յաւնեցայն ժամ ուսանին եւ ի գիտութիւն ճշմարտութեան ո՛չ հաւանեն. պիտի ըսուի այսպիսիներուն. «Դո՛ւ ես վարդապետ Խաչադէի եւ զայդ ո՛չ գիտես.» Ա.) Ո՛վ ըսաւ թէ յանցանք չկայ, երանի՜ թէ չըլլար, բիւր երանի. բայց կայ, դժբախտաբար, և մէկէ շատ աւելի, ինչպէս ցարդ մասնանշեցինք ստէպ. և Ս. Քահանայապետն որ միակ դատաւոր է, կ'ըսէ թէ յանցանք կայ, և ո՛չ միայն կ'ըսէ, այլ երեք գլխաւոր կէտերու վերածելով՝ կը համրէ զանոնք. ուրեմն յանդուգն և յանցապարտ է այն մարդ որ կը պնդէ թէ յանցանք չկայ. կարելի է ճիշտագոյն համար այդպէս ըլլայ. բայց հաւատացեալն վայրկեան մը չկրնար տարակուսիլ : Բ) Եւ Քահանայապետը գիտակցաբար կ'ըսէ ինչ որ կ'ըսէ. ընդունայն է ուրեմն և այնպիսիներու փախուստը որ կ'ըսեն. սխալ լուր տրուած է. ո՛վ տուաւ. մի՛ թէ ի ծածո՛ւկ ինչ գործուած էր. անա աշխարհ ամենայն պիտցաւ, թերթերու միջոցաւ. և քնաւ հերքում մը չտուին պաշտօնապէս. մի՛ թէ անմիտ է ուրեմն Քահանայապետը, քա՛ւ, մի՛ լիցի. մի՛ թէ իր համրած գործերը չկատարուեցա՞ն առաջի աշխարհի : Գ) արդ զերազոյն դատաւորը կ'ըսէ թէ այս գործերը քառական են բանադրուելու համար, ու կը բանադրէ : Դ) Կտրուկ պատասխան մըն ալ կայ, եթէ օրէնքէ կը հասկնան. օրէնքը կ'ըսէ որ, Մեծաւորին տուած պատիժը ենթադրելով որ նոյն իսկ անիրաւ ըլլայ, արտաքին ատենսի մէջ կը զօրեւ և կը գործադրուի մինչև որ անիրաւութիւնը ապացուցուի :

Ո՛վ սիրելիք, այս տեսակ սովեւստութիւնք, փախուստի ճամբաները, — որոնք սովորական են մալսրելոց. — այս տեսակ անարժան խօսքերը չեն որ պիտի կարենան դարմանել այս աճաւոր վեհաժողովը. այլ մի միայն անկեղծ ապաշաւ, կատարեալ հաղանդութիւն և ուղղութիւն՝ մտաց և գործերու :

23. Կը սպասուէր ուրեմն որ գոնէ՛ Քահանայապետական այս կրտ-

բուհի հրամանագրին առջեւ գլուխները ծռուէին. հնազանդութիւն յայտնուէր և այս ողբալի պառակտութիւն մէջտեղէն վերնար: Բնաւ ամենեւին ոչ: Տեսէ՛ք թէ, փոխանակ իբրեւ պարտաճանաչ Կաթողիկեայք զղջում և հնազանդութիւն յայտնելու. ո՛րքան անխոհեմ և յանգուգն ընթացք: Սրբազան Քա՛նաչայապետին համակ մը գրեր են՝ 1. իբր Վարչական Ժողով և զայն բայարձակապէս իբր օրինաւոր ցոյց տուեր են, և իրենք իբրեւ անդամներ այն ժողովոյ ստորագրեր են: — Արդ, այդ ժողովը ապօրինաւոր և հրճուածող և բանադրեալ հրատարակուեցաւ. Ս. Քա՛նաչայապետէն, յայտնի է հետեւեալոր որ նա անոր գոյութիւնը չընդունիր. որով և այդ ժողովը, շարունակելով իր նիստերը և միանգամայն գրելով այդ համակը, ուրիշ բան ըրած չլլայր եթէ ոչ նոր արձամարհանք մը նետել Քա՛նաչայապետի երեսին: — 2. Յայտնե՛ր են ան համակին մէջ թէ այդ ժողովը ճշմարիտ Կաթողիկեայ է և հնազանդ Հոռոյ Աթոռոյն. իսկ Քա՛նաչայապետը կ'ըսէ թէ հերձուածող է և բանագրեալ. ուստի այս ալ դառն հեղինակութիւն ու երգիծանք մըն է Քա՛նաչայապետին դէմ: — 3. Հասկցուցեր են թէ Թէրզեան Եպիսկոպոս(՝) գիրենք գրապարտեր է. ուստի կը ծաղրեն Ս. Քա՛նաչայապետը իբր անգիտակից, այսքան ծանր խնդրոյ մը մէջ խաբուած՝ սակայն և տխուր վճռող. ուրեմն՝ ըրածը զիջցող մէկը: — 4. Ըսե՛ր են թէ այդ բանագրանքը Թէրզեանին դաւաճանութեան արշիւնքն է միայն և թէ իրենք յնաւ պատճառ չեն տուած այս պատժոյ արժանանալու համար. — ահա դաւաճաւորին գրելով, իր վճիռը կ'ոչնչացնեն. և զինքը անխառն կը հռչակեն: — 5. Ամենապ. Հոգեւոր Տէրը պարզապէս «ԵՊԻՍԿՈՊՈՍ» տիտղոսով կ'անուանեն. մինչդեռ Ս. Քա՛նաչայապետը զինքը «Պատրիարք եղբայր» «ՊԱՏՐԻԱՐԺ Հայոց» կ'անուանէ, կը պաշտպանէ անոր հոգեւորական իշխանութիւնը, կը մխլէթարէ և իրեն դէմ գործողները կը պատժէ խստիւ. ամենէն ծանր եկեղեցական պատիժներով: — 6. Նաեւ վարմանալի համարձակութեամբ կ'աղդարարեն, թէեւ սքողեալ ջառերով, որ Ս. Քա՛նաչայապետը պէտք է ուրիշ տրամադրութիւն առնու Ամենապ. Հոգեւոր Տեառն անձին նկատմամբ: Ահաւասիկ հպատակութեան աղերսագիր մը... Ըսէ՛ք, ինչդրեմ, աս ի՞նչ տեսականամակ է, և գրողները ի՞նչ տեսակ Կաթողիկեայք կամ... իմաստուններ են... Ո՛րչափ գեղեցիկ սփերով զարդարուած լլլայ, Ս. Քա՛նաչայապետին քով ի՞նչ ընդունելութիւն կրնայ գտնել այսպիսի համակ մը:

24. Հուսկ բան ահա խօսեցաւ Եկեղեցւոյ գլուխը և վարդապետական եղաւ ինչիկը. տրամաբանութիւն և հաւատոյ կանոնը պէտք է որ վերջնականապէս մերձեցուի. կա՛մ—կա՛մ (aut—aut). կամ ճշմարիտ ու պարտաճանաչ Կաթողիկեայ ենք, և պիտի հնազանդինք Ս. Քա՛նաչայապետին, անպայման և անվերապահ հպատակութեամբ. ազգասիրութիւնը անհնազանդութիւն չէ, ըմբոստութիւն չէ, հերձուածողութիւն

չէ. զմեզ ճշմարտապէս սիրող Քահանայապետին պիտի թողունք մեր բոլոր հոգերը, մտահոգութիւնները, և պիտի ընդունինք ինչ որ նա՝ մեզի կ'առաջարկէ յանուն կանոնաց Ս. Եկեղեցւոյ, առանց մենք դատաւոր ըլլալու, առանց պրպտելու, քննադատելու կամ սովբեցնելու. ինքը, իւր խմաստութեամբ և հայրական բարեացակամութեամբ պիտի կարգադրէ ամէն բան՝ առանց զոհելու ընաւ մեր ազգային գոյութիւնը՝ իր ամէն պարագայիւք. — և կա՛մ անջատողական ենք, անամէջ և սուտանուն ազգայնական ենք, անուանական կաթողիկեայք ենք, և պիտի չհնազանդինք — Տէր մի՛ արասցէ՛, — հրամանաց Ս. Աթոռոյ, — և այն ասին արդէն իսկ դատապարտուած ենք Յիսուս Քրիստոսէ. և դուրս պիտի մնանք անոր Եկեղեցիէն, անոր հաղորդութենէն և երկնաւոր փառքէն. զի բաւ Տէրը. «Եթէ եկեղեցիին ալ չընէ, ըլլայ քեզի իրեւ հեքանոս ու մախաւոս»։ Շողոքորթները, անտարբերները, ազգայնականները, կուսակցականները, ուրացող խրատողները, արդիականները, բանապաշտները, անկրօնները չեն որ պիտի կարենան ազատել զմեզ Որդւոյն Աստուծոյ բարկութենէն, որ կը գոչէ. «Անա՛ քողեայ զիցի ձեզ տունդ ձեր աւերակ»։

25. Ո՛վ պատուական եղբարք, լաւ եւս է Ամենափրկիչ Յիսուսի և իր Փոխանորդին հաւատալ, անսալ և հնազանդիլ, քան աշխարհաւործան և ազգակործան մոլորելոց և աղանդաւորաց և հերձուածողաց. ի՛նչ նմանութիւն լուսոյ՝ խաւարի հետ, կամ ի՛նչ համեմատութիւն Քրիստոսի ընդ բելիարայ... Ի հնունդ մեր հայրերն ու նախնիք անոնց ձեռքէն սիրայօժար քաշեցին զրկանքներ, թալաններ, արտորք, բանտ ահաւոր, բազմատեսակ չարչարանք ու լլկանք, մահն իսկ, և քաշեցին՝ անվեհեր և մեծ ուրախութեամբ, և դարերու տեւողութեամբ. ինչո՞ւ. Հռովմայ Եկեղեցւոյն Ս. Հաւատքը անաղարտ պահելու համար. Ս. Քահանայապետին հնազանդելու համար. անոր խօսքերը, Վճիռները, ակնարկներն անգամ նուիրական էին իրենց համար. Եթէ անոնք ձեր տեղն ըլլային, այսպէս անտարբեր կամ անխիղճ պիտի ըլլային Հոգեւոր Պետը, Եպիսկոպոսները, եկեղեցական կանոնները արհամարհելու. Քրիստոսի Փոխանորդին չանսալով, անոր ամէն մէկ խօսքը, գործը, հրամանը մեկնելու ու մերժելու. անոնք՝ որ հալածանաց մէջ ծառայի կամ փերեղակի կամ ջրեպանի ձեւերու ներքեւ ներկայացող քահանայի մ'առջև արտաստեալ իր խոնարհէին՝ անոր ստքերուն հողը համբուրելու. անոնք որ իբրեւ Աստուծոյ հրեշտակը կ'ընդունէին զայն, և միակ մխիթարութիւն և ցնծութիւն էր իրենց՝ անոր խօսքերը լսել, ինչպէս թէ իրօք Քրիստոս ինքնին եկած ըլլար. անոնք՝ որ պիտի դադային իրենց դատաւորին դատաւոր ըլլալ. որ պիտի նախընտրէին հաղար անգամ հեռուել քան թէ Ս. Քահանայապետին պղտիկ մէկ ակնարկին հետտել։ Ո՛հ, և բեւականեցէք վայրկեան մը, եթէ ըստ զիպաց

անոնց եկած ըլլար պատիժ մը Բրիտոսի Փոխանորդէն... Տէր Աստուած, ի՞նչ աղէտ անփոխարինելի. կենդանւոյն մեռած պիտի սեպէին զիրենք. ի՞նչ աւաղում, ի՞նչ հառաչանք, որպիսի՜ անվերջ լացք, և ապաշաւ և խոնարհութիւն և հնազանդութիւն անվերջ, և անվթար, մինչև որ քաւէին իրենց յանցանքը. մինչև որ փոխանակ անէծքի ընդունէին օրհնութիւն: Ո՛հ, մենք ալ անոնց զաւակներն ենք: Անոնք արժանի զաւակներ Յիսուսի, լալով ողբալով կը թախանձէին օրհնութիւն. իսկ մենք ծիծաղելով պիտի ստանձնենք անէծքն ու բանադրանքը: Օ՛հ անգր, սթափինք և իբր արժանաժառանգ որդիք այնպիսի նախնեայ, իբրեւ ճշմարիտ Կաթողիկոսայք, ապաւինինք մեր երիցս երանեալ Ս. Հօր, Բրիտոսի Տեառն մերոյ Փոխանորդին հայրական գիրկը:

«Դարձե՛ք ինձի, եւ ան ասեմ ես ալ ձեզի աիսի դառնամ, կ'ըսէ Տէր»:

#### Վ Ե Ր Զ

#### Ա Զ Դ

Յառաջիկայ թիւով պիտի սկսինք մերք ընդ մերք հրաւարակելու յօդուածներու շարք մը՝ որոնք պիտի պարունակեն Օրմանեանի «Հայ Եկեղեցի» գրքին վրայ մանրամասն քննադատութիւն: Խնդրոյն աւագ կարեւորութիւնը եւ քննադատ հեղինակին քաջ հմտութիւնն ու բազմակողմանի գիտութիւնը ինքնին կը յանձնարարեն ուշադիր ընթերցումն:

Նոյնպէս պիտի հրաւարակուին «Իմաստութեան Սկզբանց վրայ» վերնագրով յօդուածներ, օրումն ամենակարեւոր իմաստասիրական հարցերուն վրայ, հո՞ծ եւ քեղուն իմաստներով առջի, եւ կարի շահեկան ամենուն համար առհասարակ: Աւելորդ կը համարինք ընթերցողաց մասնաւորաբար յանձնարարել:

### ՄԱՐԴՈՒԹԵԱՆ ՓԱՌՔԵՐԸ

#### ԵՂԻՍԱՔԵՐ ՍԻՂԸՆ

Ա.

Ֆրանսական Ակադեմիան 1871 Նոյեմբեր ամսոյն մէջ կը պսակէր երկհատոր աշխատութիւն մը, որոնց հեղինակն էր տաղանդաւոր կին մը,

Տիկին տը Պարպրէ(\*) : Վեհիմաց և սրբաշունչ հոգւոյ մը կենսագրութիւնն էր այն , որ ցայսօր իսկ չէ կորուսած բնաւ իւր արդենութիւնն և հրապոյր : Ընդհակառակն որչափ աւելի հոգեպաշտ սկզբունքներ կը յաղթանակեն յեւրոպա և այլուր , և որչափ հակակրօնային նախապաշարմունք կը նուազին ու կը տկարանան , այնչափ աւելի կը բարձրանայ այդ սրտագրաւ կենսագրութեան արժէքն , ու անոր ընթերցումն կը լինի ամենուրեք գերազանցօրէն հետաքրքրաշարժ , հրահանգիչ , փրկաւէտ և սրբարար :

Մենէ շատերու գուցէ դեռ եւս անծանօթ դէմք մ'է այն վսեմ Ամերիկացին , որ աստի շուրջ դար մ'առաջ Միացեալ Նահանգաց մէջ առաջին երեւելի նորադարձն եղաւ ի կաթողիկէութիւն , և որոյ զիւցազնական առաքինութիւնք գրաւեցին և պիտի գրաւեն ընդ միշտ հիացումն քաղաքակիրթ մարդկութեան : Ճանչցաւ նա ճոխութեան և երջանկութեան վայելքներն , ու յետոյ հրաժարելով աշխարհի բոլոր հաճոյքներէն՝ նուիրեց ինքզինքն աղքատներու և որրերու ծառայութեան : Հիմնադիր գթութեան Քերց յԱմերիկա՝ ոչինչ ինչայեց տարածելու համար Աստուծոյ սէրը սքտերու մէջ , և կաթողիկէ Հաւատոյ պայծառութիւնն յաւելլու համար իւր մօտն ու հեռուն : Կրնանք ըսել առանց չափազանցութեան թէ իւր կեանքն եղաւ երկնից մեծագոյն բարիքներէն մին առ վշտաշարշար մարդկութիւն :

Տիկին Եղիսաբեթ Ալիզըն — օրիորդ Պէյլի — դուստր համբաւաւոր բժշկի մը , ծնած է ի Նիւ-Եորք 1774 Օգոստոս 28ին , իւր ծնողք բողոքական , այլ պարկեշտ ու պատուաւոր՝ բարւոք դաստիարակութեամբ օժտեցին զայն : Ուշիմ , սրամիտ և խոհուն օրիորդն , որ աղնուածին սրտի մը կը միացնէր անկեղծ ու զուարթաբարոյ նկարագիր՝ շատ կաշնութէն կ'ղգար իւր մէջ եռանդուն սէր մը կրօնի և կրօնական իրեւութեան : Նրբաճաշակ ու գեղասէր իւր հոգւոյն խորապէս կ'ազդէին գեղարուեստք ու գեղեցիկ դպրութիւնք : Անեղր հիացում և անշիջանելի խանդ և աւիւն կը ներշնչէին իրեն բնութեան հրաշալի տեսարանք : Ովկէանոսն ու ձորեր , լեռներն ու լիճեր , մարդերն ու անտառք , առուններու կարկաջն հեզամրմունջ ու սոխակին գեղգեղանքն հետանաւագ՝ մէն մի պերճախօս յորդոր էին նմա՝ օրհնելու զԱրարիչն և երկնից դաշնակութեանց ցանկալու :

Իւր անզուսպ ընթերցասիրութիւնը չմղեց զայն երբեք կրքոտ վէպերու և յուր մատենից , որք զգուսնք կ'ազդէին և եթ իւր բարեպաշտ ու մաքրատնչ մտքին : Աստուածաշունչն , ու մանաւանդ Նոր Կտակարանն եղաւ միշտ իւր սիրելագոյն մատենան , որոյ բարոյալից և վսեմագոյն էջերը կ'ընդօրինակէր սրտալիր հաճոյքով , և յորմէ կը

(\*) Elisabeth Seton et les commencements de l'Eglise Catholique aux Etats-Unis, par Mme de Barbercy

սիրէր խնդրել լոյս և խորհուրդ, սփովանք և քաջաւերութիւն: Իւր անխոնջ ուսումնասիրութիւն Աստուածայինն Գրոց՝ կարող պիտի ընեն զայն մի օր հազուադիւտ դիւրութեամբ և այնչափ բարեգէպ կերպիւ յիշելու սաէպ սրբազան բնագիրներն յօգուտ և ի յորդոր անձին և այլոց: Իւր հոգին սնած համակ Աստուածորդւոյն, մարգարէից և առաքելոց վսեմ շնչտերով՝ գերապոյն օծութիւն մը պիտի հաղորդէ իւր շրթանց ու գրչին, և ո՛չ բարեպաշտ աշխարհականք միայն, այլ և գիտուն աստուածաբանք ու բարձրաստիճան եկեղեցականք իսկ գերբնական հաճոյք մը պիտի գտնեն յաւէտ իւր մեղրածորան խօսակցութեանց և իմաստալից նամակներուն մէջ:

ՀԵՐՄԱՆ

### ԱՅԼԵՒԱՅԼՔ

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ Ի ՎԻՆՆԱ: — Աւստրիոյ Մայրաքաղաքին բնակիչները, որ այնքան յարգադիր են եկեղեցւոյ, Սեպտ. ի մէջ կատարուելիք Համաժողովին առթիւ կ'ուզեն ցոյց տալ թէ ո՛րպիսի կենդանի հաւատք կը բախտի Կաթողիկէ Վիեննայի արտերուն մէջ: Գլխաւոր Մասնախումբը, որուն նախագահն է Վիեննայի Արքեպ. Կարդ. Նակլ, կը շարունակէ իր նիստերը գումարել արքեպիսկոպոսական պալատան մէջ: Ընդհանուր քարտուղարը Ժողովին հաղորդեց թէ Աւստրիոյ ամէն թեմերուն մէջ ենթաժողովներ կազմուեր էին այրերէ ու կիներէ, Համաժողովին մասնակցական գործերը տարածելու համար: Նոյնպէս ուրիշ երկիրներու մէջ ալ մեծ եռանդով կ'աշխատուի այս վախճանաւ: մանաւանդ ի Գերմանիա, Գաղղիա, Հոլանտա, Անգղիա, մինչև իսկ յԱմերիկա: Կարդ. Ֆիշէր, Գոլոնիայի Արքեպիսկոպոսը, մասնակցութեան յայտարարութիւն զրկած է: Խորհրդակցեցան նաև այլ եւ այլ ծէսերու մասնակցութեան ձեւին, ինչպէս նաև բնակարաններու պատրաստութեան խնդրոյն վրայ: Հարկ դատուեցաւ վարձել ամբողջ թաղեր, որովհետև քաղմախուռն յաճախութիւն կը սպասուի օտարներու որոնց ընդունելութեան և տեղաւորման համար մասնաւոր ենթ — յանձնաժողովներ կազմուեցան: Խօսուեցաւ զարգարանքի, յալթական կամարաց, ազգերու յատկացուելիք եկեղեցեաց, ճամբորդութեանց, երաժշտութեան, երգեցողութեան, տպագրութեանց վրայ, որոց ամենուն համար զատ զատ կարգադիր մասնախումբեր կազմուած են արդէն: Այսպիսի պատրաստութիւններէ կը տեսելի թէ մեծ յաջողութիւն մը պիտի գտնէ այս Համաժողովը, հնար է գերադանցելով անցածները: Ամբողջ Աւստրիոյ Կաթողիկէ ժողովրդեան կարծես զօրանցքը պիտի կատարուի այս 23րդ Համաժողովին մէջ. պետութեան ամէն կողմերէն հազարաւոր թուով պատուիրակութիւններ պիտի զըր-

կուին: Զարմանալի բան, նոյն իսկ չկաթողիկեայք կ'ուզեն մասնակցիլ Համաժողովին փառաւորութեանց, իբր ազգային պարծանք մը նկատելով զայն: Կան նաև հակառակորդք, մանաւանդ հրեայք, ինչպէս Պրայթըր պատգամաւորը, որոնք կ'աշխատին ցոյց տալ զայն իբր կուսակցական հաւաքում, և իբր տին արգելել կամ գոնէ վարկաբեկել. բայց զուր ջանք և ընդունայն վաստակ: Այս հակառակութեանց համար առաւել եւս կը գրգռուի և կը բազմապատկի կաթողիկէից եռանդը և գործունէութիւնը ամէն գաւառներու մէջ, ուսկից հարիւր հազարաւոր խումբեր պիտի վազեն գան ի Վիեննա, որոնց շատերը իրենց ազգային տարազով ու համազգեատով երփներանդ և գունազեղ փայլ մը տալով մանաւանդ մեծ թափորին: Թիւրքիք հիմակուին իսկ պատրաստուած են, մասնաւոր կառախումբեր վարձած են հազարներով վազելու Համաժողովին: Նոյն պատրաստութիւնները կը տեսնուին միւս Ալպեան գաւառներու մէջ ալ, և ի Պոնէմիա, Կալիցիա և Պուքովինա, լեհեր, Բուլթէններ, ևւն: Բազմախումբ պիտի ըլլայ Հունգարիոյ ներկայացուցչութիւնը: Մաճառներով, Սքլաւոններով, Ռումէններով, Զորս հազար խրուաթներ ազգային զգեստներով պիտի երթան:

Անգղիայէ, Գաղղիայէ հարիւրաւոր մասնակիցներ կը խոստանան ներկայանալ:

Զարմանալի և օրինակելի նախանձախնդրութեամբ ու եռանդով տիկնայք եւս մասնախումբներ կազմած են ամենուրեք, Համաժողովին յաղորդութեան աշխատելու համար, ասոնց օրինակը շատ կը զօրէ գալլերու հաւատքը սթափեցնելու և արծարծելու զանոնք միեւնոյն նպատակաւ: Եւ է աշխատութեան չինայելու: Վերջին անգամ իրենց գլխաւոր Մասնաժողովը նիստ մը գումարեց ընչ նախագահութեամբ Նորին Կայսերական և Թագաւորական Բարձրութեան՝ Արհիդքսուսուհի Աննունցիադայի: Կայսերական Գերդաստանին և ամենէն բարձր Անուականութեան վերաբերող տիկնայք մասնակցեցան անոր. և խորհրդակցեցան քօքալիսիսին այն միջոցներուն վրայ որոնք իրենց կ'իյնային: Այս գլխաւոր Մասնաժողովը կը բաժնուի վեց Յանձնաժողովներու, որոնց կը նախագահեն մէն մի Վեյսփառ Արհիդքսուհի՝ Կայսերական Տունէ, ունենալով իրենց օգնականներ, խորհրդականներ միւս տիկիններէն, մեծամեծ իշխանուհիներէն:

Համաժողովի համար գրութիւնք և դիմումներ է'առաքուին կեդրոնական Ատենադպրութեան ի Վիեննա Սթէֆանսըայ 5:

Այժմէն իսկ քաջ կը գուշակուի որ յիշաւի փառայեղ պիտի ըլլայ Վիեննայի մէջ կատարուելիք Ս. Հաղորդութեան Ի. Գ. Համաժողովը, արժանավայել հանգիստանալով Կաթողիկէ Կայսրութեան մը:

— Սրբազան Հայրն մեր Պիոս Ժ. Վիեննայի Ս. Հաղորդութեան Համաժողովին իրեն պատուիրակ կարգեց Վսեմ. Վանքօստում Կարդինալը. որուն հետեւորդ կարգուեցան՝ 1. Գեր. Յակոբ Սինիպոլսի, Կանոնիկոս Ս. Պետրոսի, 2. Պարոն Շէօնպէրկ, սենեկապետ Վասիկանու, 3. Լ. Լանչէլլօթի. 4. Գեր. Պորքովիչ:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### Հ Ռ Ո Վ Մ

Յուլիս 20ին Երջանկայիշատակ Լեւոն ԺԳ. Քահանայապետի մահուան իններորդ տարեգարձին առթիւ. Վատիկանի պապաւոր Սիքստեան մատրան մէջ հոգեհանգստեան ձախնուոր պատարագ մատուցուեցաւ Կարգ. Տօմէնիգօ Ֆէրրուպէ, որու ներկայ կը գլուխուէր Պիոս Ժ. Ս. Քահանայապետը իր պալատական բոլոր պաշտօնեաներով: Երգեհանը կը վարէր նոյնինքն Սիքստեան մատրան նշանուոր մայէստրօ Մօնս, Լօրէնձօ Բէրօզի Ս. պատարագէն վերջ հոգեհանգստեան պաշտօնը կատարեց Պիոս Ժ. անձամբ և արարողութիւնը վերջացաւ ժամը շուրջ 11ին:

~~~~~

### ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Ամենապ. և Գերբրջ. Հոգեւոր Տէր շնորհաւորական ուղեւթիւններ տուաւ առ Ն. Բ. Մեծ Եպարքոս և միւս Վսեմ. նախարարներուն, և արժանացաւ ժամանոր մեծարանաց: \* \* \* Մասնաւոր շղարքերակոնաւ Զմմառու միաբաններուն ծանուցուեցաւ Գերբ. Ներսէս Թադադիր Ն. Վ. Տարտաղանեանի մահը, որ առ տէր փոխեցաւ ցանկալի մահուամբ կնքելով իր անցաւոր կեանքը, ի 22 Մայիսի, Զմմառու վանուց մէջ, ի հասակի 68 ամաց: Հոնգուցեալը առաքինի և աղնիւ բնաւորութեան տէր անձնաւորութիւն մ'էր. յարգուած ամենէն և Երկար տարիներ ուսաքելութիւն ըրած է իւր ծննդավայրին՝ Եղսկիոյ մէջ:

Մեհմուա Թերթին 4999 թիւին մէջ Մեծ. Ոսկեան Գր. էֆ.ի ստորագրութեամբ երկայն յօդուած մը երեւցաւ՝ զինուորականութեան ծանօթ քեզիքէին նկատմամբ տեղի ունեցած տեսակցութեան առթիւ Արձագանգիս 52 թիւին մէջ գտնուած լուսարտութեան իբր պատասխան:

Թէեւ Թերթիս ուղղութիւնն ու վախճանը չի ներեր անհարկի վիճարանութիւններ ընել. սակայն խնդրոյն առած ձեւը պատուաւորութեան կէտին վերածուած ըլլալուն, կ'ուղենք միանգամ ընդ միշտ պարզել հետեւեալ կէտերը:

1. Գր. էֆ.ի յիշողութենէն չկրնար վրիպիլ թէ՛ իրեն քաջատճականպէս յայտարարուեցաւ որ Ս. Քահանայապետէն բանադրուած և ապօրինի ու հերձուածող հոգակուած Ժողովոյն հետ մենք չենք կրնար բնաւ յարաբերութիւն ունենալ: Սակայն խնդրոյն բացառիկ կարեւորութեան և երրորդ անձերու էական շահերը չի զոհելու համար, խոստուցանք բոլորովին անուղղակի կերպով մը այս մասնակի խնդիրը կարգադրելու վրայ խորհիլ. և զանազան անուղղակի եղանակներու իբրեւ օրինակ մը միայն՝ Գերբ. Աճէմեան Ն. Վ.ին միջամտութիւնը յիշուեցաւ որ Գր. էֆ.ի հետ՝ ոչ իբր Ժողովականի այլ իբր անհատի մը հետ, տեսակցի. — ապա թէ ոչ՝ եթէ ուղղակի յարաբերութեան մէջ մտնել ուղած ըլլալինք, Աճէմեան Ն. Վ.ին յիշատակութիւնը նշանակութիւն չէր ունենար: Եւ աւելցուցինք նաեւ թէ՛ կամ այս կերպով կամ ուրիշ կերպով մը պիտի տշխատէինք այդ խնդիրը կարգադրել, ինչպէս որ արդէն ուրիշ կերպով կարգադրելու ձեռնարկած ենք: — Պէտք է նաեւ յիշէ Գր. էֆ.ն թէ ոչ միայն այս յայտարարութիւնն ըրինք իրեն, այլ նոյն իսկ մտերմական յորդոր ևս կարգադրենք որ Թողու քաշուի այդ Ժողովէն՝ իբր պարտաճանաչ Կաթողիկոսի և հնազանդ որդի Ս. Քահանայապետին, իսկ ինքն ըստ իր խորհելու եղաւ նախին պատասխանեց մեզի — Մեր տեսակցութիւնը ճիշդ այսպէս անցաւ:


2. Կառավարական քեզիքէն զոր մանրամասնութիւնները իմանալու համար պահած էինք, առ Գր. էֆ. վերադարձուեցաւ ոչ թէ Մեհմուայի Յուլիս 30ին, այլ Յուլիս 23 ի հրատարակութեան պատճառաւ. յորում կ'ըսուէր թէ Ժողովը որոշած է Արփիարեան Արք.էն հարկ եղած տեղեկութիւններն առնուլ և ապա մատուցանել առ որ անկ է, և թէ առ այս Ժողովական պատուիրակ նշանակուած էր Գր. էֆ. Ոսկեան: Այս հրատարաւ

կութիւնը պաշտօնական բլլալուն, թիւրմացութեանց տեղի չտալու համար, այսինքն, կարծել չտալու համար թէ ժողովոյն պատուիրակը անտարբերութեամբ և առանց ինչ դիտորդութեան ընդունուած և հետեւաբար ժողովոյն գոյութիւնն և օրինաւորութիւնը ճանչցուած ըլլայ, թուղթը վերադարձուեցաւ. և Գեր. Միւթէվէլլեանին յանձնարարուեցաւ որ այս փոփոկ պարագան պարզաբանէ— Բաց յայսմ ամենայնէ, պարսք կը սեպենք դարձեալ քացարձապալիս յայտարարել՝ թէ այս թուղթին ետ ղրկուելէն Ամենայ. Հոգեւոր Տէրը և ոչ իսկ լուր ունէր:

3. Արձագանցի վերոյիշեալ 52 թիւին մէջ ըսինք, Ա. թէ՛ սուս են Միւթէվէլլեանի մէջ Ամենայ. Հոգեւոր Տէրոջ վերադրուած դերը, խօսքերը, գործերը, այսինքն՝ ձրի նախատինքները. նոյնը նորէն բացարձակապէս կը յայտարարենք.— Բ. Ըսինք թէ՛ նոյն թերթին Գեր. Միւթէվէլլեանի վերադրուած խօսքերն ալ սուս են: Արդ, նոյն Գեր. Միւթէվէլլեանի մեզի բրած բերանացի ու գրաւոր բացարձակ յայտարարութեան վրայ յենլով, կրկին կը հաստատենք զայս— Գ. ըսինք թէ՛ սուս են նոյն թերթին մէջ մեզ վերադրուած ինչ ինչ բաներ. գլխաւորաբար վերև յիշուած մեր ամենակարեւոր յայտարարութեան կատարեալ լուրութեան դատապարտուիլը. իսկ ընդ հակառակն՝ բացառապէս յայտարարէն ցոյց տրուիլը՝ թէ մենք ուղղուած յարարելութիւնը հլուութեամբ ընդունենք. միայն Ամենայ. Հոգեւոր Տէրը մերժեր է. ապա՝ թուղթին ետ ղրկուիլը ո՛չ թէ միայն Հոգեւոր Տէրոջ գիտակցութեամբ եղած է, այլ նոյն իսկ Հոգեւոր տէրը ետ ղրկեր է, և ո՛չ թէ մենք: Արդ, կը յայտարարենք թէ բոլոր այս բաները ճշմարտութեան հակառակ են:

4. Գրիգոր Էֆ.ի հետ, այս,՝ բարեկրթութեամբ վարուեցանք. բայց սոսկ մեր պարտքը կատարեցինք: Մեր միջավայրին մէջ կուսակցական կոյր կիրքերը լիկ քաղաքապարտութիւնն իսկ չափազանց ցանկալի դարձուցած են, աւա՛ղ:

— Կը մնայ ուրիմն որ խմբագրութիւնս վշտառիթ կերպով իրեն վերադրուած «ճշմարտութիւն» հետքով կամ խեղափոխութեամբ ո՛չ բրած է և ոչ մտածած: Իսկ մենք բնաւ անձնականութեան հետ գործ չունինք. այլ միայն թերթին քննադատութիւն բրած ենք: Եւ Գր. Էֆ.ի անձին և պարկեշտութեանը վրայ ձախող ակնարկութիւն մընելը մտքէ իսկ անցուցած չըլլալով, անձի ուղղուած իր կծու ու երգիծաբան ոճը անհաւատալի ու կուրծկեր անակնկալ մը եղաւ մեզ: Եւ անպատու մը անհաւան մարմնով կրկին ու կրկին կարգացինք նմանութիւն Յիսուսի ոսկեղենիկ մատենին Բ գրքին է՝ զլուխը — Եւ ապա խորին փղձուկով յաւ ածելով հինն ու նորը, . . . որոշեցինք Գր. Էֆ. Ոսկեանի այդ գրութիւնն ալ պահել իրրեւ յիշատակ և . . . յաւէտ լուր:



#### ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Պերութի մէջ արարերէն լեզուով հրատարակուած Այ Պաշխ տնուն Կաթողիկէ մեծ օրաթերթը՝ որ Պատրիարքական Ատենան կողմէ դադարման դատապարտուած էր, արւտօնուած է այժմ՝ Կրկին հրատարակուելու: Այ Պաշխի տնօրէնը Վեր. Հ. Մալուժ իր թերթին դադարման պահուն չէր զրկած անոր բազմաթիւ ընթերցողները Այ Պաշխի ձայնը լսել տալու, անոր տեղ շուտ մը ուրիշ թերթ մը հանած ըլլալով:

\* \* \* Յիսուսեան Հայրերէն Բեռ Վեռնիէ վերջերս արարերէն լեզուաւ հրատարակեց նմանութիւն Յիսուսի Բրիտանի գրքոյի, որու թարգմանութեան գեղեցկութիւնը փար չի մնար բնագրի գեղեցկութենէն:


\* \* \* Շիրաքի մէջ խուշերու ի նպաստ ընկերական կեդրոն մը հիմնելու համար 13,000 տնգլ. ոսկւայ գումար մը յանձնուած է Հ. Մէլլըրի նախարարուն Տիկ. Ռ. Կորմուլի իր այդ նուերին հետ նամակ մըն ալ ղրկած է, որու մէջ կը խոստանայ 30,000 տնգլ. ոսկի ևս տալ՝ անմիջապէս երկիրը գնուելէն վերջ: Հ. Մէլլըր որ այնքան եռանդաւոր կ'աշխատի այս գործին, Շիրաքի մէջ գտնուած Լ. քեթա տնուն խուշերու հաստատութեան մը մատուցանալու է: Մտտ օրերս Հ. Մէլլըր Բարիկ պիտի երթայ ներկայ գտնուելու խուշերու հաւմագողովին:

# ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Կարնոյ նահանգի տակ գտնուող նշանաւոր հայաբնակ խոտորջուրի գեղախումբին պատկանած մէկ բերրի դաշտագետինը Լադերէն գրաւուած էր: Խոտորջուրցիք աւելի քան 20 տարիէ ի վեր դատի մէջ են ետ առնելու համար զայն. և թէև քանիցս դատարաններ առն իրաւունքը ծանօցած էին, բայց դարձեալ տեղական կառավարութիւնը մերժած էր զրկելոց իրաւունքը պաշտպանելու: Սահմանագրութիւնն այ իթթիհատի օրով չուզեց լսել խոտորջուրցիին բողոքներուն: Այժմ խղիւրը կրկին դատարան ելած է: Յուսանք թէ այժմ վերջ տրուի առն զրկանաց՝ ուսկից մեծապէս կախում ունի հէք խոտորջուրցիին կեանքն ու ապագան տնտեսական տեսակէտով:

\* \* Հաճոյքով կ'իմանանք թէ Յովհ. Պէյ Գույումճեան՝ որ Արտաքին Գործոց նախարարութեան խորհրդական էր պիտի մնայ իր պաշտօնին մէջ:

\* \* Մուշէ կը հեռագրուի թէ Խոյթի Հայերը իրենց արտերը սերմանած պահառն յարձակում կրած են նշանաւոր ոճրագործներու կողմէ. և երկու հագի մեռեալ տուած են:



# ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Յուլիս 10ի ազգային տօնը բաղդատմամբ նախորդ տարիներու նսեմ անցաւ, զի Դահլիճին շուրջ վերջերս անցած դարցածները, և իթթիհատական մէկքանի օրկաններու յապարկէզ հրաւիրելու մնայթ ունեցող հրատարակութիւնք, բաւական ազդած էին հանրային կարծիքին վրայ, շատ զգոյշ շարժելու համար: — Ազատութեան քլուրին վրայ առաւ տուէն տեղի ունեցաւ պատկ զօրահանդէս մը նորընտիր պատերազմական նախարար նազըմ փաշայի ուղղութեան ներքեւ, և որու Սուլթանն անգամ չկրցաւ ներկայ գտնուիլ վերջին խաղաղ յեղաշրջման հետեւանքով շատ յոգնած զգալով ինքզինք, և իբր ներկայացուցիչ զրկած ըլլալով իր տեղ Ա. Թիկնապահ Սալիհ փաշա:

Բայց նորընտիր Դահլիճին ցոյց տուած անոխակալ ընթացքէն և յոյժ խահմ ներշնչումներէն, ինչպէս նաեւ զինուորական վարչութեան ձեռք տուած շրջահայեաց միջոցներէն ապահովուած ժողովուրդը՝ կէս օրէն վերջ խանդավառեցաւ ու լուսավառութեան գիշերը հանգէսը բան մը չկորոյս իր շքեղ փայլէն:

\* \* Նոր Դահլիճը յատուկ շրջաշերտակմով մը ծանոյց տմէն կողմ՝ թէ պէտք է տամէն պաշտօնէի միակ փոյթն ըլլայ գործնականապէս ու կատարելապէս պահպանել Դաւ նաւը Էստաթի արամադրութիւնները:

\* \* Նոր Դահլիճը որոշեց մեծամեծ բարենորոգումներ ընել Ալպանիոյ մէջ: Այս մասին հարկ եղած որոշումները պիտի տրուին նախարարաց Խորհուրդի առաջիկայ նիստին մէջ:

\* \* Նոր Դահլիճը մտադրած է անմիջապէս փոխել գաւառներու կուսակալները: Աւջին անգամ պիտի փոխուին Պոլսոյ կուսակալ Իպրահիմ պէյ և Իպիւրի կուսակալ ձէլալ պէյ:

\* \* Նոր Դահլիճը որոշած է տյուսայ նախարարութեանց նոր խորհրդականներ կարգել: Գը հաւատարմի թէ որոշուած է Ելմտական նախարարի խորհրդականը պաշտօնէ գաղբեցնել:

\* \* Երեսփ. Ժողովին լուծումը պահանջող հեռագիրներ կու գան գաւառներէն Բ. Դուռ: Նոր Դահլիճը նկատողութեան տուած է այս խնդիրը: Բայց կառավարութիւնը Երեսփ. Ժողովը լուծելէն առաջ յանձնաժողով մը պիտի զրկէ գաւառները օտուգելու համար թէ վերջին ընտրութիւնները ապօրէն եղանակով կատարուած են թէ ոչ, Այդ մասին գաղափար մը կազմելէն ետքը, Դահլիճը պիտի տայ իր որոշումը:

\* \* Կ'ըսուի թէ նոր Դահլիճը զուր անգլիական քաղաքականութեան պիտի հետեւի և երբեմն համաձայնութեան պիտի յարի:

\* \* Սելանիկէն եկած տեղեկութեան մը համաձայն, Եւրոպայի մօտ ապստամբներուն և Օսմ, պիւռնորներուն միջեւ ընդհարում մը պատահեցաւ և այդ ընդհարումին մէջ

Ականատիները 189 զինուոր, 4 սպայ և 1 զինուորական բժիշկ գերի տարին: Իրէքի և Ես-  
քովայի պահակազորքերուն սպաները Ականատիներու պահանջներուն համաձայնութիւն կը  
յայտնեն:

\* Մանսիթըրի սպաներու կողմէ ասկէ առաջ Պոլիս զրկուելով Պատերազմական  
նախարարութեան պաշտօնատան մէջ բանտարկուած Համզա, Իսմայիլ և Հաֆիզ անուն  
սպաները և 12 դասալիք զինուորներ ազատ արձակուեցան:

\* Կը տեղեկանանք թէ մամուլի, հաւաքումներու և առժամեայ օրէնքները, ու-  
րոնք տակաւին երեսփ. Ժողովին կողմէ վերջնականապէս ընդունուած չէին և նախորդ կա-  
ռավարութեան պատասխանատուութեան տակ գործադրութեան գրուած էին, չեղեալ  
նկատուած են:

\* Աւելանիկէ 40ի չափ սպաներ Պոլիս եկած են իբրեւ պատուիրակ Զինուորական  
միութեան, բանակցելու համար վերին իշխանութեանց հետ:

Կ'ըսուի թէ Ականատիները կանոնաւոր զօրաց միանալով Սիւլայ մտած և անկէ  
հեռագրած են Բ. Դրան թէ մինչև որ խորհրդարանը չի լուծուի, իրենք քաղաքէն դուրս  
պիտի չելլեն:

\* Սպաներու Միութիւնը խորհրդարանի անդամներէն ոմանց նամակներ ուղղած է  
բանակին փափաքը պարզող, այդ նամակներէն մին խորհրդարանին մէջ կարդացուելով  
Յուլիս 12ին բաւական յազում պատճառեց, ահա այդ նամակին պատճէնը.

«Մեր Միութիւնը գիտէ թէ Բոսնիայի մէջ խորհրդարանին մէջ այնքան չարաշուք  
արարքներէ վերջ, այս անգամ ալ Ն. Վեհափառութեան մօտ ամէն ձեռնարկներ ու դա-  
ւեր կը նիւթէք: Թէպէտ ձեր ընթացքը պատժուելու արժանի է, սակայն ձեր աղտոտ ա-  
րիւնք թափելէ կը գարշիւնք: Զեղի կ'ազդարարենք որ եթէ 48 ժամէն չապացուցանէք որ  
բանակին ու ազգին գլխաւոր նպատակին իրականացման արգելք պիտի չըլլաք որ է Մե-  
քուսարանին կամ լաւ ևս է ըսել, Ֆընտըղլըի Գլխաւոր կամ Թատրոնին լուծումը, և եթէ  
մինչեւ իսկ չհաստատէք թէ մեր պահանջներուն ընդունելութեան կ'աշխատէք, լիովին  
պիտի կտորտենք մեր վրայ ծանրացող հայրենասիրական պարտականութիւնը:»

Ազատարար Սպաներու Միութիւնը  
11/24 Յուլիս, 1912

Յ. Դ. — Դիտելի է որ անօգուտ կը նկատենք գիմել այնպիսի մարդերու որոնց վրայ  
ու եւ արժանիք չենք ճանչնար:

\* Սոյն սպանաբեր մասին կը յայտարարէ Իթիլաֆի կուսակցութիւնը՝ թէ բա-  
լորովին առւտ է սպաներու կողմէ զրկուած ըլլալը. այլ Իթիլաֆիականներու կողմէ սարա-  
քուած խաղ մըն է. վարկաբեկելու համար բանակին ու Իթիլաֆիականները:

\* Այլ. գորաց ընդհ. հրամանատար Ժաղը փաշա փոխած է ի վէրինօփը, և նա-  
զը՝ փաշա ևս Միթրովիցայի աւստրիական հիւպատոսարանը՝ զինուորներուն ձեռքը չիյ-  
նալու համար:

\* Ապահովութեան Տնօրէն անուանուեցաւ Դամասկոսի առեւտրական գաւառարանի  
նախագահ Վասըֆ պէյ:

\* Սուլթանին մօտ այսօր փաղը ձեռնարկ պիտի ըլլայ երեսփ. Ժողովը լուծելու հա-  
մար, կ'ըսէ յոյն թերթ մը: Թանին արտատպելով կ'աւելցնէ, «Աս պակաս էր»:

#### Բ Ո Վ Ա Ն Դ Ի Ա Վ Ո Ի Թ Ի Ի Ն


|                          |     |
|--------------------------|-----|
| II. Քահանայապետին նամակը | 401 |
| Ազդ                      | 409 |
| Նդիսաբեք Սիբրն           | 410 |
| Այլեւայլ                 | 411 |
| Տեղեկագրական             | 413 |

ԱՐՏՕՆԱՏԻՐ  
ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԿՐԱՊԵՏ  
ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Յ զարգ. Օսմանեան Դիւանի Լեկ. Էպուսուուս նաշուի Նո. 27



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ ի Պատրիարքարան  
պատշօնական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը  
սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծագիր էջերէ բաղկացած եւ  
նոյն բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին  
մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյոգ ամէն յուրերն՝ համառօտ-  
ուած . որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց  
մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերք կարդալու :

#### ԸՍԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

|                                                                                                      |                  |
|------------------------------------------------------------------------------------------------------|------------------|
| Թրւիւնի համար                                                                                        |                  |
| Տարեկան . . . . .                                                                                    | Դիւնէկ . արծ. 40 |
| Վեցամսեայ . . . . .                                                                                  | » » 20           |
| Արտասահման                                                                                           |                  |
| Տարեկան . . . . .                                                                                    | Ֆրանկ 10         |
| Վեցամսեայ . . . . .                                                                                  | » 5              |
| Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին <i>Մանսա-Քոստոյ</i> եւ<br>կամ մէյ մէկ դրոցոց նամակադրութեամբ : |                  |

#### Մէկ քիւ 1 Դահեկան



Նամակ , յօդուած , եւն. կը դրկուին խմբագրութեան հասցին.  
ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ  
Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց  
Բերա Կ. Պոլիս

Katoghiché Arzakank  
Patriarcat Arménien Catholique  
Péra Constantinople

- ԾԱՆՕԹ.— 1.— Արձագանց կը հրատարակուի շաբաթ օրերը:  
2.— Խմբագրութիւնս պատրաստուեալ չէ անպատշաճ կամ նոյնութեամբ  
հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:  
3.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:  
4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան բոլորին մէկ  
կողմը միայն:  
5.— Խանութեանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: